

Եթէ մինը կարողանայ իւր արմունկը համբուկել, իսկոյն թռչուն կը դառնայ:

Ծիածանի տակից անցնողը եթէ տղայ է՝ աղջիկ, իսկ եթէ աղջիկ՝ տղայ կը դառնայ:

Ն Հ Ա Ն Ա Ի Ո Ր Տ Օ Ն Ե Ր.

Նոր-սարի.—Սա բաւական անշուք է անցնում թէ քաղաքում և թէ մանաւանդ գիւղերում: Առհասարակ ոչ խանութները և ոչ արհեստանոցներն են փակւում, ուստի և շատ քչերն են այցելում միմեանց: Քաղաքում առաւօտ վաղ պատարագ են մատուցանում, որպէսզի տարին լաւ անցնի: Այցելելով միմեանց շնորհաւորում են նոր-տարին և բարեմախտում առողջութիւն և յաջողութիւն: Այցելուներին հիւրասիրում են սուրճով և ընկույզի ու նշի գոգինաղով: Գիւղերում այցելողները խնձոր կամ կիտրոն են տանում իրենց հետ և մի մի հատ տալիս ում որ շնորհաւորում են: Սրանց հիւրասիրում են օղիով և չոր մրգեղէնով:

Մի քանի տներում դռան ճակատը զարդարում են կարմիր թելերով, որպէսզի նոր-տարին էլ կարմիր, ուրախ անցնի:

Ուրիշ տեղեր եղած ծանօթներին և աղգականներին այցեւորման ուղարկելու եւրոպական սովորութիւնը քաղաքում հետզհետէ ընդհանրանում է:

Ծնունդ եւ Մկրտութիւն Քրիստոսի.—Ճրագալույցի գիշերը, ասում են, գետը մի լուպէ կանգ է առնում. եթէ այդ միջոցին մի որեւէ իր դնեն ջուրը՝ իսկոյն արծաթ կամ ոսկի կը դառնայ. իսկ եթէ քար դնեն՝ դա ամէն տեսակ հիւանդութիւններ բուժելու շնորհը կստանայ: Այժմ կանայք այս գիշեր երեք անգամ ընկղմւում են գետի մէջ, որպէսզի երեխայ ունենան:

Սուրբ Սարգիս.—Առաջաւորաց պատր այս գաւառում ևս յայտնի է որպէս Սուրբ Սարգիսի պատ: Ամբողջ հինգ օր պատ, և շատերը՝ միաժում են մնում, այսինքն օրը միայն մի անգամ, կէսօրին են ճաշում: Այս շաբաթուալ ընթացքում ծանր

գործեր չեն անում, ո՛չ ճախարակ մանում, ո՛չ բուրդ գզում և ո՛չ լուացք անում, որպէսզի Սուրբ Սարգսի ձին չսահթաքի: Նոյնիսկ եղջերուն Աստծու հրամանով այս շաբթուն այնպէս չի շարժւում, որ վրայից մազ թափուի և սուրբ Սարգսի ոտներին փաթաթուի:

Հաւատալով, որ Սուրբ Սարգիս այդ շաբաթուայ ընթացքում քաղցած է մնացել և ուրբաթ օրը ցորենի հասկերը փշրելով իւր բռում կերել է, իրենք էլ ի յիշատակ այդ անցքի, նոյն այդ ուրբաթ օրը ցորենից փողինց են անում և ուտում: Երիտասարդ տղաներն ու աղջիկները նոյն գիշերը աղի բլիթ են ուտում, որպէսզի երազում տեսնեն, թէ ով կըզայ իրենց ջուր տալու, միանգամայն հաւատալով, որ նա պիտի լինի և սպասած ամուսինը:

Չաբաթ օրը գրեթէ ամէն տուն խաշիլ է եփում, ուստի և այս պատճառով կոչւում է նաև «խաշիլի պաս»: Սովորաբար այս օրը ուխտ են գնում մօտակայ Ս. Սարգսի ուխտատեղիները: Այսպիսի ուխտատեղիներ գաւառում բաւականաչափ կան, որոնց մէջ աւելի նշանաւոր է Փանձա՛լի արեւմտեան կողմում գըտնուածը: Այստեղ հաւաքւում են ուխտաւորների ահագին բազմութիւն, երեքական անգամ պտոյտ գալիս ուխտատեղու շուրջը, մոմ վառում, աքաղաղ մատողում: Վերադարձին հանդիպողին փոխանակ բարեւելու՝ ասում են. «Խաչը քեզ ողջոյն է դարկել»:

—Ողջ կենաս, պատասխանում է հանդիպողը:

Բարեկենդան. — Ս. Սարգսի տօնից մինչև մեծ պաս բարեկենդան է համարւում և այս միջոցում ժողովուրդը թէ՛ լաւ սննդւում է, և թէ՛ շատ ուրախ անցկացնում: Միայն այս միջոցումն է, որ գրեթէ բոլորի տանն էլ միս է գտնւում: Բացի սրանից հարսանիքներից շատերը այս միջոցումն են կատարւում և գրեթէ ամբողջ գիւղը ի միասին է անցկացնում ժամանակը: Հարսանիք չեղած օրերումն էլ փոքրիկ խմբեր կազմած այս ու այն տանը ուտում խմում և քէֆ են անում. ապա, երբ գլխները բաւականաչափ տաքացած է լինում, դաւուլ գուռնի առաջնորդութեամբ սկսում են շրջել գիւղը, պարել, երգել և հազար ու մի տեսակ միմոսութիւններ անել:

Ահա մի ալոպիսի խումբ բարեկենդանի վերջին օրը իւր միջից մինին առաջնորդ է ընտրում, քիւրքը թարս հազցնում, փափախը շրջած դնում, երեսին սև մուր քսում և կնոջ շորեր հաղած մի տղամարդու հետ շրջում գիւղը: Գիւղացիները սրան ասում են «Քեօսա-գեալդի» և ահագին բազմութեամբ հետեւում նրան: Թէ քեօսան և թէ, մանաւանդ, նրա կինը հազար ու մէկ ծամածռութիւններ ու հանաքներ անելով ծիծաղեցնում են շրջապատողներին:

Մի քանի ուրիշ խմբեր էլ «Ղոշուն դոշունի» կամ «Ջահ-շահի» են խաղում: Մաքրում են մի կալ. մի բարձր տեղ պատրաստում, մի երկար ձող ցցում և ծալքին մի կանանչ ու կարմիր թաշկինակ կապում ու թողնում, որ ծածանի: Ապա երիտասարդներից ամենից ճարպիկ ու սրախօսի գլխին մի եռանկիւնի, թաղաձև փոստ են անցկացնում, փորը ուռցնում, կուրծքը, ուսերը զարդարում զանազան ձևի գունաւոր կտորներով, վերան մի հազուադէպ վերարկու ձգում: Կրծքին շարում զանազան գոյնի թղթեալ մեղալներ և իբր շահ բազմեցնում թաղթի վրայ: Միւս երիտասարդները միմի երկար մահակ ուսերին դրած շարում են նրա յետևը, որպէս նրա հաւատարիմ թիկնապահներ, իսկ միքանի սրախօսներ կանգնում են նրա առաջը և զանազան խնդիրների մասին զեկուցանում նրան: Ահա միքն սկսեց գիւղի մի հարստի մասին գանգատուել և ամբաստանել նրան զանազան դեղծումների մէջ: Ջահը իսկոյն հրամայում է իւր թիկնապահներից միքանիսին գնալ և բերել նրան: Սրանք էլ անմիջապէս բռնի կերպով բերում են նրան շահի առաջ: Ջահը երեսովն է տալիս նրա արածները և տուգանք նշանակում: Իսկոյն թիկնապահները սկսում են չարչարել նրան, մինչև որ վճարում է տուգանքը: Այսպէս դատաւարութիւնը շարունակւում է, մինչև որ իւր է գալիս, թէ մի ուրիշ շահ յարձակումն է գործում: Անմիջապէս այս շահը խաղացնում է իւր զօրքերին և յարձակում եկող շահի վրայ: Սկսում է բաւական լուրջ կռիւ. մահակները իրար են հարւում և փշրում. երբեմն զլուխներ էլ են պատառւում: Վերջապէս մի կողմը յաղթող է հանդիսանում: Իսկոյն յաղթուած

շահին նստեցնում են իշի վրայ, ագին ձեռք տալիս, երեսին մուր քսում և թիկնապահներով շրջապատած պտտեցնում գիւղը՝ հազար ու մի կատակներ անելով և նուէրներ ժողովելով:

Կէս գիշերին, երբ արդէն միքանի անգամ հաց կերած են լինում և ձուով «փակած բերանները», հրացաններ են արձակում «բարեկենդանին փախցնելու»:

Տեառներնդառաջ. — Նորապսակ երիտասարդները ցրտնի ծառի ճիւղեր են բերում և եկեղեցու բակում դարսում: Եթէ մի նորապսակ զլանում է այս սլարտականութիւնը կատարելու, քահանան նրանից 40-50 կ. տուգանք է առնում: Երեկոյեան ժամասացութիւնից յետոյ երեղեցու ջահից վերցրած մոմով վառում են այդ խարոյգը, որ «դռնտառունչ» է կոչւում և նորապսակ զոյգերը երեքական անգամ պտտւում են շուրջը և վերջը ամուսինները երեքական անգամ թռչում դռնտառունչի վրայից: Երեխաները մի մի հաւ գրկած կանգնում են խարոյկի շուրջը. որպէսզի հաւերը մեծ պասին յաճախ ձու ածեն: Ապա մի խանձող առած վերադառնում տուն: Միքանիսը այս խանձողները (ընձղակոթ) պահում են, որ զատկի թաթախման երեկոյին «կաթնաւի» տակ դնեն և թաթախուին այդ կերակրով:

Տէրնդագի մոխիրը ջրի մէջ լուծում խմեցնում են ծնրնդկանին, որ հեշտութեամբ ազատուի, հիւանդին, որ առողջանայ: Նոյն մոխրից ածում են հաւաքնում, որ հաւերը շատ ձու ածեն, պահում և գարնանը շաղ են տալիս արտերում, որպէսզի մուկը չկտրի ցանքսերը:

Տէրնդագի համար անպատճառ ցրտնի են գործածում, որովհետեւ «Քրիստոսը ծնուած միջոցին այդ ծառի ճիւղերով է փաթաթուել»:

Մեծ-այաւ. — Առաջին օրը տղամարդիկ և պառաւ կանայք խնձորներ և կիտրոններ առած այցելում են միմեանց՝ մեծ պասը շնորհաւորելու: Նորապսակները անշուշտ մի-մի թաշկի-նակ լի մրգեր առած գնում են իրենց զոնքանչներին տեսութեան, համբուրում են նրանց ձեռքերը և մրգերը տալիս: Զոնքանչներն էլ համբուրում են նրանց ձակատը և մի մի զոյգ դուլպայ ընծայում:

Տան մեծերը մի մի շիշ օղի առած դնում են տանուտերին և քաճանալին տեսութեան, շնորհատրում են նրանց պատիւը, իրենց օղիից մի մի բաժակ նախ իրենք խմելով և ապա նրանց առաջարկելով: Եւ եթէ միքէջ օղի ամեղանում է, շշերը տալիս են տնեցիներին, որ դատարկեն և վերադարձնեն:

Կէս օրից լետոյ երիտասարդները ձիաւորուած դուրս են գալիս մի հրապարակ, քաղաքում «Ջարուր» կոչուած դաշտը և արշաւում: Ահագին բաղմութիւն գալիս է դիտելու և գովաբանելու իրենց ճարպիկութիւնը ցոյց տուող երիտասարդներին:

Իսկ աղջիկներն ու հարսները իրենց տներէ բակերում և կամ մօտակայ ծառի տակ ձրորթի (ճինջաղ) են խաղում: Խաղը աւելի կենդանութիւն է ստանում, երբ կամաց-կամաց երիտասարդներն էլ են մօտենում և մասնակցում: Խաղի «տաք» ժամանակը մինը մի ձող է առնում ձեռին և այնքան հըրում ձրորթին և ձողով խփում մէջը նստողին, մինչև որ նա տալիս է իւր ապագայ նշանածի անունը: Եւ որովհետեւ ընկերներին լալտնի է լինում թէ ով ում է սիրում, ուստի և խոտովանութեան ենթարկուողը չի ազատուում, մինչև որ ճշմարիտը չի խոստովանւում:

Միջունքի չորեքշաբթի երեկոյին «լիճք» են կոչում և «լիս վառում», այսինքն մի ամանի մէջ նախ միքէջ ջուր և ապա ձէթ են ածում ու մի բամբակից ոլորած պատրոյգ դնում մէջը և վառում ՚ի վիշատակ «քառասուն մանկանց», և քառասուն անգամ ծունր դնում:

Հետեւալ օրը այդ կանթեղի մէջ մնացած ջուրը օջախը կամ թոնիրն են ածում, մեղք համարելով «արդար» ջուրը մի անսուրբ տեղ թափել:

Փաղկազարդ. — Տեղական բարբառով կոչում են *դրուպար*: Առաւօտ շատ վաղ, դեռ լուսը չբացուած, ամէնքը շտապում են եկեղեցի: Այս օրը բոլոր հարսերն ու աղջիկները անշուշտ լինում են եկեղեցում: Երբ «Առաւօտ լուսոյ» շարականը երգում են, կրեխները *Հաւա* են ածում: Եւ երբ ուռնում ճիւղեր են օրհնում, նշանած աղջիկների գլխերին սկստրանք հարդաթ են ձգում և մոմ տալիս ձեռք: Փամասացութիւնից յետոյ դնում են:

գերեզմանատուն, բազարը հաց տանելով իրենց հետ, մոմեր վառում գերեզմանների վրայ, ողբում, հացն ուտում և վերադառնում:

Չարչարանաց օարաթ. — Առգ Երեշուբէի երեկոյեան ժամերգութեան միջոցին տասը երեխայի շապիկ են հագցնում, ձեռներին մոմ տալիս և կանգնեցնում եկեղեցու սեղանի առաջ: Երբ տասը յիմար և իմաստուն կուսանաց առակը կարդում են, աւագ դպիրը մի ավաէի մէջ տասը կլորած թղթեր է ածում և առաջարկում այս երեխաներին վերցնելու: Այս թղթերից հնգի վրայ «յիմար», իսկ միւս հնգի վրայ՝ «իմաստուն» խօսքերն է գրուած լինում և ըստ այնմ երեխաներից հինգը իմաստուն, իսկ հինգը յիմար են համարւում:

Զիւ-չորեքաբքի. — Այս օրը սովորաբար ուխտ են գնում «Մկնատամի խաչերին», որոնցից նշանաւոր է Գանձակի հարաւ արեւմտեան կողմում «Ղզլղայա» կոչուած բլրակի և Էրքէճ գիւղի մօտ գտնուածները: Ուխտաւորները մոմ են վառում, աղօթում և այդ ուխտատեղու հողից մի քիչ ջրով շաղախելով քսում մկնատամ ունեցողների վէրքերի վրայ, որ լաւանան: Վերադարձին քաւրեր են գլորում կամ նետում, որպէսզի իրենց հիւանդութիւններն էլ այդ քաւրերի հետ գնան անցնին. և կամ ուխտատեղու մօտ եղած ծառերից շորի կտորներ են կապում, որպէսզի իրենց հիւանդութիւններն էլ այնտեղ կապուած մնան:

Տուն վերադառնալով նոյն ուխտատեղից բերած հողը լուծում են ջրի մէջ և խմեցնում աղջիկներին, որպէսզի նրանք շուտով ամուսնանան:

Նոյն օրը շատ ընտանիքներ հիմնովին մաքրում են տները — «չիք են անում»:

Աւագ-հիմեգաբքի, երեկոյեան ժամերգութեան միջոցին կարագ իւղ են տանում եկեղեցի և տալիս քահանային: Ոտնչուալի միջոցին քահանան լուանում է գրեթէ բոլոր ծերունիների ոտները և բոլոր կանանց և երեխաների ձեռքերը և միմիքից օրհնուած իւղ դնում: Այս իւղը քսում են աչքերին, ճակատին և մազերին:

Ս. վաղամանց օմը. ղիւղերում բոլորովին չի տօնւում,

իսկ քաղաքում հոգեհանգիստ է կատարւում եկեղեցու մէջ, քարոզ և ճառեր խօսւում:

Ինչերալին ժամերգութեան ժամանակ ժամաւորները բաղարջ հաց են բերում իրենց հետ եկեղեցի և բաժանում լիշատակ բաղարջակերաց տօնի:

Այս ժամերգութեան միջոցին երիտասարդները շատ անկարգութիւններ են անում, մանաւանդ Գանձակում, ուր վերջին տարիս նրանցից միքանիսը թույլ էին տուել իրենց եկեղեցու մէջ թուղթ խաղալու:

Աւագ Ուրբաթ առաւօտեան դաշերիները, ոսկերիչները անխօս դնում են իրենց խանութները և եօթական անգամ մուրճով խփում սալին: Կանայք էլ ասեղով եօթը անգամ ծակում են մի որևէ շոր: Նոյն առաւօտը դաշերիները պողպատից անխօս շինում են մատանիներ, որ կոչւում են «ուրբաթարուր»: Սա դնում են մատները, որպէսզի կայծակը նրանց չխփէ, քաջքից ազատ լինին:

Ճաշու ժամերգութիւնից լետոյ ամէն տուն ընդհանրապէս և այդ տարում ննջեցեալ ունեցողները մասնատրապէս, բաղարջ հաց, և պաստալ կերակրներ են բերում եկեղեցի, ուր սփռոցներ են սփռում և այդ բերածները դարսում. ապա բոլոր ժամաւորները նստում միասին ուտում են, իրենց գլուխ ունենալով քահանաներին, որոնք ճաշից լետոյ ամենայն ննջեցեղոց համար մի ընդհանուր հոգոց՝ են ասում:

Այդ օրը փայտ չեն կտրում, կանանչի չեն հանում, գետինը չեն փորում, որպէսզի Քրիստոսի գերեզմանը քանդուած չլինի:

Չարաթ առաւօտեան քահանան խոստովանեցնում է գիւղի բնակիչներին և հաղորդում երեխաներին: Այս վերջիններս մի-մի կամ երկ-երկու ձու են տալիս քահանային հաղորդուելու միջոցին: Այնուհետև քահանան շրջում է տները և օրհնում, ստանալով կամ մի քանի կոպէկ և կամ ձու, բրինձ, ցորեն, ևալն: Երեկոյեան նախատօնանքին կրօնամոլները իրենց հետ ձու են տանում եկեղեցի, որ «ժամաւ քաշեն» և նրանով բանան պասը: Պատահում են և այնպիսի որկրամոլներ,

որ Հէնց եկեղեցում «Աւէք կերէք»-ը ասելիս՝ անմիջապէս ուտում են ձուն: Դոյն երեկոյին ժամուորների մեծագոյն մասը հաղորդւում է:

Սոյ բրեկոյի պատարագը մինը «առած» է լինում, որը և քահանային, տիրացուներին և միքանի մարդկանց ընթրիքի է հրաւիրում: Սովորաբար այս երեկոյին ձուկ և փլաւ են եփում: Իսկ կարմիր, դեղին և այլ գոյնի ներկած ձուն անպայման լինում է:

Ձատիկ.— Առաւօտեան ժամերգութիւնից յետոյ գիւղացիները գնում են նախ տանուտէրին, քահանային և ապա իրենց բարեկամներին Քրիստոսի յարութիւնը շնորհաւորելու: Տանուտէրին և քահանային սովորաբար մի-մի շիշ օղի են տանում նուէր:

Ձու կուռեցնելու սովորութիւնը սաստիկ ընդհանրացած է թէ փոքրերի և թէ մեծերի մէջ:

Միքանի գիւղերում այս օրը հասարակական մատաղ են անում և եկեղեցու զաւթում միւսը լաւաշ, հոյցի մէջ փաթաթած բաժանում ժամուորներին, սա կոչւում է «ախար», իսկ սրանից՝ այս զատիկ կիրակի օրը՝ «ախար օր»:

Երկուշաբթի, մեռելոցին, ամէն տուն զանազան ուտելի-ղէններ և մրգեր առած գնում է գերեզմանատուն, օրհնել տալիս իւր հին ու նոր ննջեցեալների գերեզմանները և ապա միացնելով իւր բերած ուտելիղէնները բոլորի բերածների հետ, միասին հաց են ուտում. այստեղ էլ նախ տղամարդիկ և ապա կանայք:

Ապրիլի 1.—Թէ քաղաքում և թէ գիւղերում ընդհանրացած սովորութիւն է միմեանց խաբել:

Նաւասարդ.— Այցելում են միմեանց և շնորհաւորում նորտարին: Հարսերի հերանց տներին ընկոյզ են բերում և հերթիկից ամում փեսաների զլխներին, ճւղաւ, այսինքն զաթաների, խնձորների, հաւերի շարան—քաշ տալիս նոյն հերթիկներից: Գրեթէ ամէն տուն կորկոտ է եփում:

Համբարձում. Տօնի նախընթաց օրը առաւօտեան շատ վաղ եօթ աղջիկ միասին, բոլորովին անխօս գնում են եօթն

աղբիւրից եօթը բուռ ջուր վերցնում, եօթը տեսակ ծառից եօթը տերև պոկում և եօթը տեսակ ծաղիկի հետ ածում մի բղուղի մէջ, ապա իրենց դրկիցները տները ման ածելով՝ դանազան նշաններ—մատանի, բալանի, կոճակ, դանակ և այլն, —ձգում են բղուղի մէջ և գիշերը տանում դնում մի վարդենու թփերի տակ, բարի աստղերի ներգործութեան ներքոյ: Չարաճճի երիտասարդները որոնում են, որպէսզի աղջիկներէց ծածուկ գողանան և հետևեալ օրը մի որևէ նուէր ստանալով՝ վերադարձնեն: Համբարձման օրը աղջիկներն ու տղաները հաւաքուած են մի հրապարակ տեղ, վիճակ հանելու. ամէն կողմից հարսներ, կանայք և տղամարդիկ գալիս շրջապատում են դրանց: Մի հինգ՝ կամ վեց տարեկան «միամիտ» երեխայի նրստեցնում են շրջանի մէջ տեղը, վիճակի բղուղը դնում գերկը և մի մեծ մեզար (մեծ շալ) ձգելով աղջկայ գլխին, ամբողջովին ծածկում նրան: Ապա նախ չափահաս և յետոյ հետզհետէ բոլոր աղջիկները խմբով վիճակի երգեր են երգում և իւրաքանչիւր երգի միջոցին վիճակահան աղջիկը բղուղի միջից մի նշան է հանում. իսկոյն այդ նշանի տէրը վերցնում է այդ և ինքն իրեն կրկնելով երգուած «գիւլումը», աշխատում է նրանից գուշակութիւններ անել: Զրջապատողները օգնում են նրան և նրա հետ ուրախանում կամ տխրում:

Այդ օրը ամենայն տուն անշուշտ «կաթնաւ» է եկում:

Զատ գիւղերում գութանաւորները միասին մատաղ են ածում և ամբողջ գիւղին բաժանում: